

## «Գրաբուս-գրախանութ»-2017

2017թ. նախատեսվել է կազմակերպել այցեր ՀՀ մարզեր «Գրաբուս-գրախանութ» ծրագրի շրջանակներում, որի նպատակն է կարևորել գրքի և գրականության դերն ու նշանակությունը, ապահովել գրքերի քարոզչությունը ՀՀ մարզերում և համայնքներում, հանրությանը իրագեկել նոր հրատարակված գրականության մասին և հնարավորություն ստեղծել ձեռք բերելու վերջին տարիների հրատարակությունները:

2017 թվականին Հայաստանի ազգային գրադարանի աշխատակիցները Շրջիկ գրադարանով «Գրաբուս-գրախանութ» ծրագրի շրջանակներում այցելել են Արմավիրի մարզի Արմավիր և Էջմիածին քաղաքներ, այնուհետև Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաք: Հուլիսի 7-ին կայացավ երրորդ այցելությունը Կոտայքի մարզի Զովունի համայնք:

Ցուցահանդես-վաճառքում ներկայացված էին «Զանգակ», «Էդիթ Պրինտ», «Անտարես», «GSM ստուդիո» հրատարակչություններից մոտ 200 անուն նոր հրատարակություններ՝ մանկական, գիտահանրամատչելի, թարգմանական, պատմական և դասական գրականություն: